ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ուսումնա-արտադրական
աշխատանքները կազմակերպելու մասին

Մենք ներքո ստորագրողներս,մի կողմից Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի տնօրեն՝ Գ.Գևորգյանը /որպես վարձակալ/,մյուս կողմից «Ֆարմ Լոտոս» ՍՊԸ ընկերությունը ի դեմս տնօրեն Լ.Գ.Վարդանյանի /որպես վարձատու/, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն ուսումնական պրակտիկա (Այսուհետ՝ նաև պրակտիկա)կազմակերպելու համար սույն պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելվածներով սահմանված ուսանողների ցանկին և նույն հավելվածով սահմանված պայմաններին համաձայն քոլեջի ուսանողներին ներկայացնում է կատարողին:

1.2 Կատարողը պարտավորվում է նախապես հաստատված ցանկին համաձայն կողմերի միջև հավելվածներով նախապես հաստատված ուսանողների ցանկի և պրակտիկայի անցկացման պայմանների համաձայն 30 տեղ:

2.ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1.Կատորողն իրավունք ունի.

2.1.1.Պատվիրատուից պահանջել ապահովելու պրակտիկանտների հաճախումները:

2.1.2. Պահանջել պատվիրատուից պրակտիկանտների և մեթոդիստների ցուցակներում կատարվող փոփոխությունները ներկայացնել ողջամիտ ժամկետներում:

2.1.3. Լուծարել սույն պայմանագիրը 10 օր առաջ այդ մասին տեղյակ պահելով պատվիրատուին , բացառությամբ այն դեպքերի, երբ ընթացքի մեջ է գտնվում պրակտիկան:Տվյալ դեպքում պայմանագիրը լուծելու մասին ծանուցում կարող է ներկայացվել պրակտիկայի ժամկետի ավարտից 10 օր առաջ:

2.2. ***Կատարողը պարտավորվում է՝***

2.2.1 Ապահովել անհրաժեշտ պայմաններ պրակտիկան հաջող անցկացնելու համար:

2.2.2 Պրակտիկայի կազմակերպման և ղեկավարման գործում ներգրավել փորձառու և հմուտ աշխատողներ:

2.2.3 Պատվիրատուին պրակտիկայի ընթացքում տեղեկացնել պրակտիկանտների հաճախելիության, կարգապահության, ինչպես նաև առաջացած խոչընդոտների մասին:

2.2.4 Ուսանողներին ծանոթացնել ընկերության անվտանգության պայմաններին և հաստատության ներքին կարգապահական կանոններին՝ ապահովելով աշխատանքի անվտանգ պայմաններ:

2.2.5 Պրակտիկայի ավարտից հետո յուրաքանչյուր ուսանողին տալ բնութագիր և նրա կազմած հաշվետվության գնահատականը:

2.3.***Պատվիրատուն իրավունք ունի.***

2.3.1.Լուծել սույն պայմանագիրը՝ առնվազն 10 օր առաջ տեղյակ պահելով կատարողին:

2.3.2.Պահանջել տեղեկություն պրակտիկանտի պրակտիկայի և հաճախումների մասին:

2.4.***Պատվիրատուն պարտավորվում է.***

2.4.1 Պրակտիկայի ղեկավարման համար նշանակել համապատասխան որակավորում ունեցող մասնագետների:

2.4.2 Պրակտիկան սկսելուց առաջ կատարողին ներկայացնել պրակտիկա անցնող ուսանողների ցուցակները՝ նշելով ուսանողների անուն ազգանունները,թվաքանակը, մասնագիտությունը, կուրսը, կիսամյակը,պրակտիկայի անցկացման ժամկետները:

2.4.3 Պրակտիկայի ղեկավարի աշխատանքը վարձատրել ՀՀ օրենսդրության համաձայն:

2.4.4 Ապահովել պրակտիկանտների աշխատանքային կարգուկանոնը, ինչպես նաև ներքին կարգապահության կանոնների պահպանումը:

3.ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրով մատուցվող ծառայությունների ընդհանուր արժեքը կազմում է 26000 ՀՀ դրամ :

4. Կողմերի պատասխանատվությունը և վեճերի լուծման կարգը

4.1 Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
4.2 Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով,համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

5. Լրացուցիչ պայմաններ

5.1 Սույն պայմանագիրը կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:
5.2 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն առաջնորդվում են ՀՀ օրենքներով,այլ իրավական ակտերով և պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությանը համապատասխան:
5.3 Պայմանագիրը կարող է փոփոխվել և լրացվել կողմերի գրավոր համաձայնությամբ:
5.4 Սույն պայմանագիրը կնքվում է 4 ամսյա ժամկետով:
5.5 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում պայմանագրի ստորագրման պահից և դադարում է ժամկետի ավարտմամբ:
6. Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու	Կատարող
ԿՈՏԱՅՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ	<<Ֆարմ Լոտոս >>ՍՊԸ
ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ	հվհ - 094-900-693
Հ/Հ 900128000313	Հ/Հ - 16318015574
բանկ - <<ՎՏԲ ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ>>	բանկ - <<Հայ Էկոնոմ>> Հրազդանի մասնաճյ
հասցե - ք. Հրազդան,Կենտրոն -96	հասցե - ք. Հրազդան, Երևանյան փ. 4/2
հվհհ – 03002347	հվհհ - 03020725
Տնօրեն Գ.Գևորգյան	Գլխավոր տնօրեն Լիլիթ Վարդանյան
01.09.22թ Կ.Տ	01.09.22թ Կ.Տ.

Պրակտիկայի ղեկավար Կ. ՍԵՄԻՐՋՅԱՆ